ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/18

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էներջի Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչներ՝ Վ. Մկրտչյանի, Մ. Գասպարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հատուկ նշանակություն ունեցող փականների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ վերացնել 03-09.03.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված մերժումը և կայացնել համապատասխան որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 11.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 11.03.2021թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/18 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

18.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 18.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 11.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հարգելի՝ գործընկերներ, դիմում-բողոքի առարկա է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր հասցեում գտնվող «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ Պատվիրատու) «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստերի Ns 2 արձանագրությունը, կայացած 03-09. 03.2021թ.-ին (տեղեկագրում հրապարակված է 2021-03-10 14:00:57 ից անժամկետ)՝ ըստ որի որոշում է կայացվել ք. Երևան, Լենինգրադյան 34/35 գործունեության հասցեում գտնվող «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետը և որպես պատճառ նշել հավելված 2-ում (գնային առաջարկ) ապրանքի անվանման ոչ ճիշտ լրացված լինելը:

Հայտնում ենք Ձեզ, որ պատվիրատուի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում (այսուհետ՝ Հրավեր), I Մասի 1-ին կետում՝ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ բաժնում, ինչպես նաև II Մասի ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ հավելված 6-ի 1-ին կետի 1.1 ենթակետում, համապատասխանաբար որպես չափաբաժնի անվանում և պայմանագրի

առարկա նշված է «կափյուր» բառը, ինչը հիմք ընդունելով մեր կողմից, կազմված հայտի գնային առաջարկի հավելված 2-ում ապրանքի անվանումը նշվել է որպես «կափյուր» (յու):

Միևնույն ժամանակ, սույն հրավերի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ (հավելված N 1) և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ (հավելված N 2)-ներում որպես անվանում նշված է «կափույր» (ույ):

Հրավերում տեղ գտած վերոհիշյալ անհամապատասխանության արդյունքում մեր կողմից լրացված գնային առաջարկի հավելվածում որպես ապրանքի անվանում նշված «կափյուր» բառը, ըստ գնահատող հանձնաժողովի, համարվել է ոչ ճիշտ լրացված և պատճառ է հանդիսացել մեր կողմից ներկայացված հայտի մերժման համար:

Մենք համաձայն չենք գնահատող հանձնաժողովի որոշման և դրա հիմքով կազմված արձանագրության հետ, քանի որ գնային առաջարկի հավելվածում ապրանքի անվանումը նշել ենք նույնությամբ, ինչպես գրված է եղել գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգում՝ պայմանագրի առարկա դաշտում: Հետևաբար սխալը կատարվել է ոչ թե մեր անուշադրության կամ վրիպակի արդյունքում, այլ կատարվել է հրավերում նշված չափաբաժնի անվան համապատասխան: Ասվածից ակնհայտ է, որ այն մերժման հիմքում չէր կարող դրվել, քանզի այն լրացվել է հրավերում առկա չափաբաժնի անվան համապատասխան: Այն չէր կարող տարընթերցման առիթ հանդիսանալ, կամ նշանակել այլ առարկա, որը կտարբերվեր գնման առարկայից:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ վերացնել 03-09.03.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված մերժումը և կայացնել համապատասխան որոշում:

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն 22.03.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 11.03.2021թ.-ի «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ դիմում-բողոքի (բողոքի ծածկագիր ԳԲՔԱ-ԼՕ-2021/18), հարկ ենք համարում ավելացնել, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2-ը՝ Գնային առաջարկը, կազմվել է ըստ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի «ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ»-ի համապատասխան, որտեղ հստակ սահմանված է՝ Հավելված 2-ի Գնային առաջարկի, կազմման կարգը, մասնավորապես՝ ապրանքի անվանման սյունակում լրացնել Հրավերի «Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1», որը սահմանված է «ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ»

բաժնում, այն է՝ «կափյուր», որն էլ իր հերթին մեր համար հիմք է հանդիսացել սույն հրավերի գնային առաջարկը կազմելիս:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված և վերջնական պահանջը և խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել արձանագրությամբ կայացված «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկի անբավարար ճանաչելու և մերժելու մասին որոշումը և «Օլեդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու հայտարարությունը:

3. «<u>Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3531-2021 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 16.03.2021թ.-ին ներկայացրած թիվ Ե/40/623-21 գրությամբ, ներկայացնելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

««Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով Ձեզ եմ ներկայացնում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը և անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հատուկ նշանակություն ունեցող փականներ (կափույրներ) ձեռքբերելու նպատակով ս/թ փետրվարի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել չորս մասնակից՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ- ն, «ԿԱ ընդ ԿՈ Թրայդ» ՍՊԸ-ն, «Լանիգերա» ՍՊԸ-ն և «ՕԼԷԴ» ՍՊԸ-ն:

Հրավերի 1-ին մասի 1-ին կետում գնման առարկայի անվանումը բաժնում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և հրապարակվել է «կափյուր», որը կրկնվել է նաև հրավերի հավելված 6-ի 1.1 կետում:

Հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնով սահմանվում է հայտը ներկայացնելու կարգը, որի 4.3 կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսվում է, որ «Մասնակիցը հայտը ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը (այսուհետ՝

ապրանքի ամբողջական նկարագիր)» և իր կողմից հաստատված գնային առաջարկը, մինչդեռ մասնակիցը գնային առաջարկում ապրանքի անվանումը ներկայացրել է հրավերի տեխնիկական վրիպակով սահմանված անվանումով (կափյուր):

Մասնակցի կողմից չի պահպանվել նաև հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի հավելված 1-6 պահանջները, հայտի գնային առաջարկը կազմելիս չի օգտվել հրավերի 6-րդ հավելվածում նախատեսված հավելված 1.1-ից, որտեղ գնման առարկայի անունը գրված է ճիշտ տարբերակով՝ «կափույր»:

Հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում գնման առարկայի անունը (անվանումը) ճիշտ գրված չէ, հայտը գնահատել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ անբավարար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետ 2-րդ ենթակետի գ) պարբերությունը և մերժել է:

Հետևաբար գնահատող հանձնաժողովը գտնում է, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ խախտվել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի գ) պարբերությունը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հատուկ նշանակություն ունեցող փականների ձեռքբերման նպատակով 23.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1 մասի 1 կետի համաձայն՝ գնման առարկան է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հատուկ նշանակության փականների ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում և որպես գնման առարկայի անվանում նշված է «**Կափյուր**»:

iii. Հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված Պայմանագրի նախագծի 1.1 կետով՝ որպես գնման առարկա նույնպես նշված է **«Կափյուր»**, իսկ տեխնիկական բնութագիր-գնման և վճարման ժամանակացույցով որպես գնման առարկա է նշված **«Կափույր»:**

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն:

v. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկում որպես ապրանքի անվանում նշվել է **«Կափյուր»:**

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03-09.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, ապրանքի անվանումը սխալ է լրացվել:

vii. Նույն արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ «Օլենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է կնքել պայմանագիր:

viii. www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 10.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ

ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հատուկ նշանակություն ունեցող փականների ձեռքբերման նպատակով 23.02.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հատուկ նշանակություն ունեցող փականների ձեռքբերման նպատակով 23.02.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1 մասի 1 կետի համաձայն՝ գնման առարկան է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար հատուկ նշանակության փականների ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում և որպես գնման առարկայի անվանում նշված է «**Կափյուր**»: Նույն հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված Պայմանագրի նախագծի 1.1 կետով՝ որպես գնման

առարկա նույնպես նշված է **«Կափյուր»**, իսկ տեխնիկական բնութագիր-գնման և վճարման ժամանակացույցով որպես գնման առարկա է նշված **«Կափույր»:** Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկում որպես ապրանքի անվանում նշվել է **«Կափյուր»:** Հանձնաժողովի 03-09.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ թիվ 2 հավելվածում (գնային առաջարկ) ապրանքի անվանումը սխալ է լրացվել, իսկ նույն արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ «Օլենդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակիցև վերջինիս առաջարկվել է կնքել պայմանագիր, ինչով պայմանավորված www.gnumner.am կայքում պայմանագիր կնքելու նպատակով 10.03.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես ապրանքի անվանում նշել է «**Կափյուր**»՝ «**Կափույր**»-ի փոխարեն, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1 մասի 1 կետի և թիվ 6 հավելվածով սահմանված Պայմանագրի նախագծի 1.1 կետի համաձայն՝ որպես գնման առարկայի անվանում նշված է «**Կափյուր**», իսկ Հրավերի օրինակելի ձևում առկա թիվ 2 հավելվածի՝ գնայի առաջարկի օրինակելի ձևում ապրանքի անվանում դաշտը լրացված չէ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, դրանց համադրման արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հրավերի հրավերի 1 մասի 1 կետով և թիվ 6 հավելվածով սահմանված Պայմանագրի նախագծի 1.1 կետով սխալ նշված «Կափյուր» /յու/ բառը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ապրանքի անվանման մեջ «Կափույր» /ույ/-ի փոխարեն նշված «Կափյուր» /յու/-ը հանդիսանում է ուղղագրական սխալ, վրիպակ /բառի մեջ սխալ գրված տառ *(տե՛ս, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976):*

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր

Ընկերության հայտը, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 11.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/18 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 03-09.03.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու, ինչպես նաև «Օլեդ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**